

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 55.2-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 29-ի թիվ 35-Ա որոշումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը հայտարարում է մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթ:

### Տեղեկատվություն

#### Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթի մասին

1. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը՝ մասնավոր մուլտիպլեքսորի գործունեություն:
2. Մրցույթի մասնակցին ներկայացվող պարտադիր պահանջները սահմանված են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 55.1-րդ հոդվածով, որի համաձայն մասնավոր մուլտիպլեքսորի գործունեությունը կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված իրավաբանական անձի կողմից, որի հիմնադրման (ստեղծման) ժամանակ կամ դրանից հետո օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժինը չպետք է հավասար կամ ավելի լինի հեռարձակող կազմակերպության որոշումների ընդունման համար անհրաժեշտ բաժնեմասերի 50 տոկոսից:
3. Անհրաժեշտ փաստաթղթեր՝
  - 1) տեղեկություններ հեռարձակման թվային ցանցը ստեղծելու և շահագործելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների և սարքավորումների վերաբերյալ,
  - 2) ֆինանսական կարողությունները հիմնավորող փաստաթղթեր,
  - 3) հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագիծը, ներառյալ ցանցի գործարկման ժամանակացույցը:
4. Դիմումներն ընդունվում են մինչև 2016 թվականի օգոստոսի 1-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-16:00: Դիմումները և կից փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով՝ ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 28 հասցեով:
5. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել (010) 52 94 32 հեռախոսահամարով կամ գրել [nctr@tvradio.am](mailto:nctr@tvradio.am) էլ. փոստի հասցեով:
6. Դիմումի ձևը՝

\_\_\_\_\_ ին  
(անուն, ազգանուն)

## ԴԻՄՈՒՄ

### Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզիա ստանալու

Դիմումատուի անվանումը \_\_\_\_\_

Գտնվելու վայրը \_\_\_\_\_

Գործունեության իրականացման վայրը \_\_\_\_\_

Հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. հասցեն \_\_\_\_\_

Պետական գրանցման համարը \_\_\_\_\_

Հարկ վճարողի հաշվառման համարը \_\_\_\_\_

Տեղեկություններ մուլտիպլեքսի կառուցման  
և գործարկման համար անհրաժեշտ ռադիոհաճախականությունների մասին \_\_\_\_\_

Դիմումին կից ներկայացվում են՝

- տեղեկություններ հեռարձակման թվային ցանցը ստեղծելու և շահագործելու  
համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների և սարքավորումների վերաբերյալ թերթ,
- ֆինանսական կարողությունները հիմնավորող փաստաթղթերը թերթ,
- հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագիծը,  
ներառյալ ցանցի գործարկման ժամանակացույցը թերթ:

Տնօրեն \_\_\_\_\_  
(անուն, ազգանուն)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (օրը, ամիսը, տարեթիվը)

Կ.Տ.